ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վարդենիս **25/03/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 18 անդամներ:

Բացակա էին՝ Արուսյակ Ավետիսյանը, Մելանյա Եփրեմյանը, Արաքսյա Հայրապետյանը, Սպարտակ Հովհանիսյանը, Արտակ Մանուկյանը, Արամ Մելքոնյանը, Սաթենիկ Մինասյանը, Զավեն Շհոյանը, Սեվակ Սիմոնյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ահարոն Խաչատրյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կամո Զարոյանը

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑ 5-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 13 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՔԸ ՏԱՐԵՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՆԱՄՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 136-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՉԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիաի նախագահի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Վարդենիս համայնքի ավագանու 26 դեկտեմբերի 2022 թվականի N 136-Ա որոշումը:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող (կադաստրային ծածկագիր՝ 05-065-0039-0009, սեփականության իրավունքի վկայական՝ 14052021-05-0060) Մեծ Մասրիկ բնակավայրի 4-րդ փողոց 5-րդ նրբանցք 13 հասցեի 0.10286 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը և 235.18 քմ ուսուցչի տունը 10 (տասը) տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիային:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ նախկինում կնքված պայմանագիրը լուծարվել է օրենքով սահմանված կարգով, հետևավար անհրաժեշտ է կնքել նորը և Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող, 05-065-0039-0009 կադաստրային ծածկագրով, Մեծ Մասրիկ բնակավայրի 4-րդ փողոց 5-րդ նրբանցք 13 հասցեի 0,10286 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը և 235,18 քմ ուսուցչի տունը 10 (տասը) տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել՝ Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիային:

Ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը՝ առաջարկելով ավագանու որոշման նախագծում կատարել փոփոխություն՝ 1-ին կետով ուժը կորցրած ճանաչել համապատասխան /Վարդենիս համայնքի ավագանու 26 դեկտեմբերի 2022 թվականի N 136-Ա/ որոշումը և 2-րդ կետով թույլատրել համայքի ղեկավարին Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող (կադաստրային ծածկագիր՝ 05-065-0039-0009, սեփականության իրավունքի վկայական՝ 14052021-05-0060) Մեծ Մասրիկ բնակավայրի 4-րդ փողոց 5-րդ նրբանցք 13 հասցեի 0.10286 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը և 235.18 քմ ուսուցչի տունը 10 (տասը) տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիային:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 17 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց ավագանու անդամ Դավիթ Շահնազարյան առաջարված ձևով:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 54-Ա)*

ԼՍԵՑԻՆ

<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԵԴ>> ՀՈԱԿ ԵՎ <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ՄԵԴ>> ՀՈԱԿ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Հիմք ընդունելով <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկական երաժշտական դպրոց>> և <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 2 մանկական երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ների կանոնադրությունների 5.4 կետի է) ենթակետը, ծնողների դիմումները և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին **որոշում է.**

1. Զիջել <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 1 ՄԵԴ>> և <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 2 ՄԵԴ>> ՀՈԱԿ-ներ հաճախող ներքոնշյալ երեխաների 2024-2025 ուսումնական տարվա ծնողական վճարները՝ համաձայն հավելվածի.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը նշեց, որ կան ՀՈԱԿ-ներ հաճախող երեխաների զիջման վերաբերյալ որոշում, որտեղ առանձնացրել ենք ենթախմբեր, սակայն լրացուցիչ նաև մեզ են դիմել սոցիալապես անապահով 62 ծնողներ. որոնք, համաձայն իրենց դիմումի, չունեն հնարավորություն սահմանված ուսման վարձերը վճարելու:

Ուստի առաջարկեց զիջել նաև <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 1 ՄԵԴ>> և <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 2 ՄԵԴ>> ՀՈԱԿ-ներ հաճախող ներքոնշյալ երեխաների 2024-2025 ուսումնական տարվա ծնողական վճարները՝

1. <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 1 ՄԵԴ>> ՀՈԱԿ հաճախող երեխաներ՝ 41:

2. <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 2 ՄԵԴ>> ՀՈԱԿ հաճախող երեխաներ՝ 21:

Երեխաների ցանկն անվանական կցված է Ձեզ ներկայացված նախագծում:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 17 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 53-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՔԱՄԱՆՉԱՀԱՐ ՍԱՄՎԵԼ ԱՐՏԱԿԻ ՋԱՔՈՅԱՆԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 46-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հաշվի առնելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ հայաստանյան և արտասահմանյան մշակութային բազմաթիվ կենտրոններում երաժշտական ելույթներ ունեցած վարդենիսցի քամանչահար Սամվել Արտակի Զաքոյանին տրամադրել միանվագ 100. 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ խրախուսանք:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը առաջարկեց տալ թույլտվություն Հայաստանյան և արտասահմանյան մշակութային բազմաթիվ կենտրոններում երաժշտական ելույթներ ունեցած և բազմաթիվ մրցույթ-փառատոններում հատուկ և առաջին կարգի մրցանակների և ՀՀ Վարչապետի խրախուսանքին արժանացած, վարդենիսցի քամանչահար Սամվել Արտակի Զաքոյանին տրամադրել միանվագ 100 հազար ՀՀ դրամ խրախուսանք:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 17 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 52-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հարկային օրենսգրքի>> 230-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Վարդենիս համայնքի Արփունք բնակավայրի բնակիչ Անահիտ Հովհաննեսյանին պատկանող անշարժ գույքի գույքահարկի մասով կուտակված 571714/հինգ հարյուր յոթանասունմեկ հազար յոթ հարյուր տասնչորս/ ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել 230891/երկու հարյուր երեսուն հազար ութ հարյուր իննսունմեկ/ ՀՀ դրամ տույժը՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկվարը՝ նշելով, որ Անահիտ Հովհաննեսյանը զինհաշմանդամի մայր է, և մեզ է դիմել հողի գույքահարկի ապառքի զիջման համար:

Ընդհանուր գումարը կազմում է 571 հազար 714 ՀՀ դրամ, որից մայր գումարը՝ 340 հազար 823 ՀՀ դրամ, տույժը՝ 230 հազար 891 ՀՀ դրամ: Հաշվի առնելով նրա սոցիալական վիճակը և դիմում-խնդրանքը,առաջարկեց զիջել տույժը՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 17 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 51-Ա)*

ԼՍԵՑԻՆ

<<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՂԱՑԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԷԴՈՒԱՐԴ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ MERCEDES-BENZ E 240 ՄԱԿՆԻՇԻ 79RV009 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17 ՄԱՐՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 52-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության <<Հարկային օրենսգրքի>> 245-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.<<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՂԱՑԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԷԴՈՒԱՐԴ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ MERCEDES-BENZ E 240 ՄԱԿՆԻՇԻ 79RV009 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> համայնքի

ավագանու 17 մարտի 2023 թվականի N 52-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման հիմնական մասը շարադրել նոր խմբագրությամբ.

<<Վարդենիս համայնքի Ջաղացաձոր բնակավայրի բնակիչ Էդուարդ Խաչատուրյանին պատկանող MERCEDES-BENZ E 240 մակնիշի 79RV009 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի 306583 /երեք հարյուր վեց հազար հինգ հարյուր ութսուներեք/ ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել 56458 /հիսունվեց հազար չորս հարյուր հիսունութ/ ՀՀ դրամ տույժի գումարը և մայր գումարի **որոշ** մասը՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ դիմել է Ջաղացաձոր բնակավայրի բնակիչ, սոցիալապես անապահով Էդուարդ Խաչատուրյանը, ավտոմեքենայի ապառքի զիջման համար:

Ընդհանուր գումարը կազմում է 306 հազար 583 ՀՀ դրամ, որից մայր գումարը՝ 250 հազար 125 ՀՀ դրամ, տույժը՝ 56 հազար 458 ՀՀ դրամ: Հաշվի առնելով նրա սոցիալական վիճակը և դիմում-խնդրանքը,առաջարկում եմ զիջել տույժը և 25 /քսանհինգ/ տոկոս մայր գումարից՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 16 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 50-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՐԴԱՆ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ MAZDA CX-9 3.7 ՄԱԿՆԻՇԻ 07VM011 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հարկային օրենսգրքի>> 245-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի բնակիչ Վարդան Մելքոնյանին պատկանող MAZDA CX-9 3.7 մակնիշի 07VM011 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի 996058 /ինը հարյուր իննսունվեց հազար հիսունութ / ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել 163495/մեկ հարյուր վաթսուներեք

հազար չորս հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամ տույժը և մայր գումարի **որոշ** մասը՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը նշեց, որ դիմել է Վարդենիս քաղաքի բնակիչ, սոցիալապես անապահով Վարդան Մելքոնյանը, ավտոմեքենայի ապառքի զիջման համար:

Ընդհանուր գումարը կազմում է 996 հազար 58 ՀՀ դրամ, որից մայր գումարը՝ 832 հազար 563 ՀՀ դրամ, տույժը՝ 163 հազար 495 ՀՀ դրամ: Հաշվի առնելով նրա սոցիալական վիճակը և դիմում-խնդրանքը, առաջարկեց զիջել տույժը և 25/քսանհինգ/ տոկոս մայր գումարից՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 17 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 49-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈԹՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՉՈՐՍ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ, 42-րդ կետերի դրույթներով, հաշվի առնելով Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրում պետական հոգածությամբ կառուցված չորս բնակելի տների սեփականատերերի դիմում-խնդրանքները և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ ավագանին **որոշում է.**

1. Թույլատրել Վարդենիս համայնքի ղեկավարին Սոթք բնակավայրում 2022 թվականի սեպտեմբերյան ագրեսիայից հետո կառուցված թվով 4 անհատական բնակելի տների ավարտական ակտերի և պետական գրանցումների համար սահմանված տուրքերը համապատասխանաբար՝ 80000 (ութսուն հազար) և 96000 (ինսունվեց հազար) ՀՀ դրամները վճարել Վարդենիս համայնքի բյուջեից:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը և առաջարկեց հաշվի առնելով նշված բնակիչների դիմում-խնդրանքը և նկատի ունենալով նրանց սոցիալական վիճակը՝ տալ թույլտվություն՝ Սոթք բնակավայրում 2022 թվականի սեպտեմբերյան ագրեսիայից հետո կառուցված թվով 4 անհատական բնակելի տների ավարտական ակտերի և

պետական գրանցումների համար սահմանված տուրքերը համապատասխանաբար՝ 80 հազար և 96 հազար ՀՀ դրամները, վճարել Վարդենիս համայնքի բյուջեից: Քաղաքացիների դիմումները կցված են ներկայացված նախագծին:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 17 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 48-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՐԵՏՈՒՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-090-0011-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության
<<Քաղաքացիական օրենսգրքի>> 605-րդ և Հայաստանի Հանրապետության
<<Հողային օրենսգրքի>> 89-րդ հոդվածների դրույթներով,
հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 20 մարտի 2025 թվականի N 331-Ա որոշումը և Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 24.03.2025 թվականի N 02//2493-2025 գրությունը՝
համայնքի ավագանին **որոշում է.**

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք ի վարչական սահմաններում գտնվող և
Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Տրետուք բնակավայրի 05-090-0011-0003 կադաստրային ծածկագրով 175.8 քմ մակերեսով դպրոցի շենքի և դրա զբաղեցրած օգտագործման և սպասարկման համար հատկացված 0.40929 հա հողամասի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 10012025-05-0017 վկայական) նվիրաբերությունը Վարդենիս համայնքին, որպես՝ նախադպրոցական ուսումնական հաստատություն շահագործելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ համաձայն <<Գույք նվիրաբերելու մասին>> ՀՀ Կառավարության որոշման՝ անհրաժեշտ է ընդունել Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, գյուղ Տրետուք, 1-ին փողոց, 20 հասցեում գտնվող, 3 338 801.96 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, 175.8 քառ. մետր մակերեսով դպրոցի շենքի,

ինչպես նաև դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար հատկացված 4092.9 քառ. մետր մակերեսով հողամասի նվիրաբերությունը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքին՝ այն որպես նախադպրոցական ուսումնական հաստատություն շահագործելու նպատակով:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 17 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 47-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ <<ՄԵԾ ՄԱՍՐԻԿ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 50-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 216-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով <<ՄԵԾ ՄԱՍՐԻԿ>> ՍՊԸ-ի տնօրեն Կարեն Արաբյանի լիազորված անձի՝ Վարդան Դադայանի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Թույլատրել Վարդենիս համայնքի ղեկավարին համայնքի սեփականություն հանդիսացող 05-005-0445-0002 ծածկագրով 0.43134հա, 05-005-0098-0032 ծածկագրով 0.002հա, 05-005-0443-0004 ծածկագրով 0.82681 հա, 05-005-0261-0005 ծածկագրով 0.02729 հա, 05-005-0260-0019 ծածկագրով 0.57272 հա, 05-005-0446-0006 ծածկագրով 0.73446 հա, 05-005-0121-0042 ծածկագրով 0.16737 հա հողամասերը՝ սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) տրամադրել <<ՄԵԾ ՄԱՍՐԻԿ>> ՍՊԸ-ին՝ 5100 կվտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի էլեկտրահաղորդման գծի սպասարկման համար:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի օգտագործման՝ սերվիտուտի տրամադրման տարեկան վարձավճար սահմանել 05-005-0445-0002 ծածկագրով 0. 43134հա՝ 133000 (մեկ հարյուր երեսուներեք հազար), 05-005-0098-0032 ծածկագրով 0.002հա՝ 650 (վեց հարյուր հիսուն), 05-005-0443-0004 ծածկագրով 0.82681հա՝ 254000 (երկու հարյուր հիսունչորս հազար), 05-005-0261-0005

ծածկագրով՝ 0.02729 հա 8500 (ութ հազար հինգ հարյուր), 05-005-0260-0019 ծածկագրով 0.57272 հա՝ 176000 (մեկ հարյուր յոթսունվեց հազար), 05-005-0446-0006 ծածկագրով՝ 0.73446 հա 226000 (երկու հարյուր քսանվեց հազար), 05-005-0121-0042 ծածկագրով 0,16737 հա՝ 52000 (հիսուներկու հազար) ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ նախորդ նիստերով <<ՄԵԾ ՄԱՍՐԻԿ>> ՍՊ ընկերությանը Վարդենիս քաղաքում և Մեծ Մասրիկ բնակավայրում տրամադրվել էր հողատարածք՝ 5100 կվտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի էլեկտրահաղորդման գծի սպասարկման համար: <<ՄԵԾ ՄԱՍՐԻԿ>> ՍՊ ընկերությունը արևային կայանի միացման համար պետք է կառուցի ուղեգիծ, որոնք անցնում են համայնքային սեփականության հողատարածքներով, ուստի առաջարկում եմ տալ Ձեր համաձայնությունը՝ նախագծում ներկայացված ծածկագրերով և համապատասխան չափերով հողակտորները՝սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) տրամադրել <<ՄԵԾ ՄԱՍՐԻԿ>> ՍՊԸ-ին:Մեկնարկային գին սահմանելով, տարեկան բոլոր հողակտորների համար ընդհանուր՝ 800 հազար 150 ՀՀ դրամ: Համապատասխան ծածկագրերով և հողակտորների չափերով ներկայացված է տրամադրված նախագծում:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 17 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 46-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 67-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 07 սեպտեմբերի 2023 թվականի N 1517-Ն որոշումը, Վարդենիս համայնքի ավագանին **որոշում է.**

1.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Սոթք բնակավայրի 3-րդ փողոց 1-ին նրբանցք 4 հասցեի (ծածկագիր 05-080-0012-0004, սեփականության իրավունքի վկայական 05022025-05-0050) բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0.13հա հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

2.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Սոթք բնակավայրի 1-ին փողոց 2-րդ նրբանցք 16 հասցեի (ծածկագիր 05-080-0025-0002, սեփականության իրավունքի վկայական 13032025-05-0024) բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0. 19339հա հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

3.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Սոթք բնակավայրի 1-ին փողոց 2-րդ նրբանցք 18 հասցեի (ծածկագիր 05-080-0022-0005, սեփականության իրավունքի վկայական 13032025-05-0027) բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0. 058հա հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

4.Մեկնարկային գները սահմանել կադաստրային արժեքի չափով 1քմ.-ի համար 200 (երկու հարյուր) ՀՀ դրամ (19-րդ գոտի):

5.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Ազատ բնակավայրի 2-րդ փողոց 3 հասցեի (ծածկագիր 05-006-0015-0003, սեփականության իրավունքի վկայական 20022025-05-0048) բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0.09577հա հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

6.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Ազատ բնակավայրի 4-րդ փողոց 19 հասցեի (ծածկագիր 05-006-0019-0016, սեփականության իրավունքի վկայական 21022025-05-0018 բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0.22399հա հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

7. Մեկնարկային գները սահմանել կադաստրային արժեքի չափով 1քմ.-ի համար 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ (20-րդ գոտի):

8.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Կութ բնակավայրի Է. Բալասանյան 1-ին փողոց 4-րդ նրբանցք 3 հասցեի (ծածկագիր 05-057-0006-0026, սեփականության իրավունքի վկայական 20022025-05-0079) բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0.07հա հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

9.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Կութ բնակավայրի Է. Բալասանյան 1-ին փողոց 1/1 հասցեի (ծածկագիր 05-057-0006-0024, սեփականության իրավունքի վկայական 07022025-05-0022) բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0.10526հա հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

10.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Կութ բնակավայրի Է. Բալասանյան 1-ին փողոց 4-րդ նրբանցք 1 հասցեի (ծածկագիր 05-057-0006-0025, սեփականության իրավունքի վկայական 13022025-05-0028) բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0.09084հա հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

11.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Կութ բնակավայրի Է. Բալասանյան 1-ին փողոց 8/1 հասցեի (ծածկագիր 05-057-0008-0004, սեփականության իրավունքի վկայական 13032025-05-0028) բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0.07728հա հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

12.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Կութ բնակավայրի Է. Բալասանյան 1-ին փողոց 10/1 հասցեի (ծածկագիր 05-057-0009-0026, սեփականության իրավունքի վկայական 13032025-05-0065) բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0,17793հա հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

13.Մեկնարկային գները սահմանել կադաստրային արժեքի չափով 1քմ.-ի համար 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ (20-րդ գոտի):

15.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ ՀՀ Կառավարության կողմից հաստատված սահմանամերձ բնակավայրերում բնակարանաշինության ծրագիրը շարունակվում է, որի շրջանակներում դիմել են շահառուներ՝ հողամաս ձեռք բերելու համար: Սահմանամերձ բնակավայրերում բնակարանաշինության ծրագրին զարկ տալու համար առաջարկում եմ տալ Ձեր համաձայնությունը՝ նախագծում ներկայացված բնակավայրերում հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու համար, և մեկնարկային գին սահմանել Սոթք բնակավայրում 1քմ-ի համար 200 ՀՀ դրամ (19-րդ գոտի), Ազատ բնակավայրում 1քմ.-ի համար 100 ՀՀ դրամ (20-րդ գոտի), Կութ բնակավայրում 1քմ.-ի համար 100 ՀՀ դրամ (20-րդ գոտի):

Իսկ նախագծի 14-րդ և 15-րդ կետերը այսօր առաջարկում եմ չլսել և թողնել հետագա քննարկման, քանի որ հարցի մնացած կետերը վերաբերվում է սահմանամերձ բնակավայրերում բնակարանաշինության ծրագրին, իսկ Դարանակը ընդգրկված չէ սահմանամերձ բնակավայրերի ցանկում :

Նշված հողամասերը հանդիսանում են համայնքային սեփականություն, որոնց վկայականները կցված են Ձեզ ներկայացված նախագծին:

Համայնքի ղեկավարն առաջարկեց 14-րդ և 15-րդ կետերը տեղափոխել հաջորդ նիստի քվեարկության,որի արդյունքում ծավալվեց քննարկում.

Ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը նշեց, որ օրակարգն արդեն հաստատվել է և հնարավոր չէ որևէ հարց հանել օրակարգից, որին ի պատասխան Կարեն Մկրտչյանը առաջարկեց առանձին քվեարկությամբ հաստատել վերոնշյալ հարցերի տեղափոխելը հաջորդ նիստին: Ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը նշեց, որ պետք է շարժվել կարգին համապատասխան:

Ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը առաջարկեց հայտարարել առանձին քվեարկություն:

Համայնքի ղեկավարը հայտարարեց առանձին քվեարկություն:

Առանձին քվեարկությամբ 18 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ որոշվեց <<14.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Դարանակ բնակավայրի 1-ին փողոց 1/5 հասցեի (ծածկագիր 05-029-0019-0007, սեփականության իրավունքի վկայական 29102024-05-0058) բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0,32465 հա հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:>> և <<15.Մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի չափով 1քմ.-ի համար 220

(երկու հարյուր քսան) ՀՀ դրամ (18-րդ գոտի):>> կետերը տեղափոխել հաջորդ նիստին քննարկման:

Քվեարկության արդյունքում 18 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Համայնքի ղեկավարը հայտարարեց տասնհինգ րոպե ընդմիջում:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 45-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆԴԵԶԻՏԱԲԱԶԱԼՏԱՅԻՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի և <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի անդեզիտաբազալտային օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման նախագծի և նախնական գնահատման վերաբերյալ 2025 թվականի փետրվարի 19-ին կայացած 1-ին հանրային քննարկման արձանագրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Տալ նախնական համաձայնություն՝ Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի անդեզիտաբազալտային օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման համար նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջների համաձայն՝2025 թվականի փետրվարի 19-ին, ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի անդեզիտաբազալտային օգտակար հանածոների հանքավայրի շահագործման նախագծի և նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը: Քննարկմանը մասնակից բնակիչները տվել են իրենց համաձայնությունը:

Համայնքի ղեկավարը նշեց, որ այժմ անհրաժեշտ է տալ Ձեր նախնական համաձայնությունը՝ Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի անդեզիտաբազալտային օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման համար նախատեսվող գործունեության իրականացնելու վերաբերյալ, որը հետագայում հանքավայրի շահագործման դեպքում կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը և Ակունք բնակավայրի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Կարեն Սիմոնյանը նշելով, որ հանքավայրի շահագործումը կարող է վնաս հասցնել բնապահպանության և շրջակա միջավայրի պահպանության մասով, քանի որ տվյալ հատվածում զբաղվում են մեղվապահությամբ: Եվ հաշվի առնելով վերոնշյալը հայտարարվեց, որ խմբակցությունը հարցին կքվեարկի ձեռնպահ:

Համայնքի ղեկավարը նշեց, որ սա դեռ նախնական համաձայնություն է, երկրորդ Ակունք բնակավայրում տեղի է ունեցել հանրային լսում, որի ընթացքում բնակիչները դրական են արձագանքել և տվել են իրենց համաձայնությունը, այն լուծելու է սոցիալ-տնտեսական հարցեր, որոնք առկա են տվյալ գյուղում, իսկ մնացածը կորոշեն գերատեսչությունները և նախատեսվում է ևս երկու հանրային լսում:

Համայնքի ղեկավարը հայտարարեց քվեարկություն:

Քվեարկության արդյունքում 10 կողմ, 0 դեմ, 8 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 44-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՈՐՖԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-089-0018-0019 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.20005 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ <<ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ>> ՀՈՂԱՄԱՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ <<ԿԱՊԻ ՀՈՂԵՐ>> ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետությունի օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ
կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված <<ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի>> 2025 թվականի մարտի 7-ի թիվ 2/փ-79 եզրակացությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական սահմաններում ընգրկված համայնքային սեփականություն հանդիսացող Տորֆավան բնակավայրի 05-089-0018-0019 (սեփականության իրավունքի վկայական՝ N24092024-05-0064) ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,20005հա <<բնակելի կառուցապատման>> հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտի նպատակային նշանակության <<կապի հողեր>> գործառնական նշանակության՝ բջջային կապի կայան տեղադրելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը առաջարկեց ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական սահմաններում ընգրկված համայնքային սեփականություն հանդիսացող Տորֆավան բնակավայրի 05-089-0018-0019 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,20005 հա <<բնակելի կառուցապատման>> հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտի նպատակային նշանակության <<կապի հողեր>> գործառնական նշանակության՝ բջջային կապի կայան տեղադրելու համար: Առկա է միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը և համապատասխան փաստաթղթերը:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 18 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 43-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԲԳԱՐ ԱԲԳԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 76, 77 և 94-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Շատվան բնակավայրի 05-073-0116-0011 ծածկագրով 2.95588հա գյուղատնտեսական նշանակության 2-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

2.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Կուտական բնակավայրի 05-058-0110-0012 ծածկագրով 2.99985հա գյուղատնտեսական նշանակության 2-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

3.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Գեղամաբակ բնակավայրի 05-022-0105-0008 ծածկագրով 2.2հա գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

4.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Ակունք բնակավայրի 05-008-0005-0049 ծածկագրով 1հա գյուղատնտեսական նշանակության 2-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

5. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Ակունք բնակավայրի 05-008-0212-0005 ծածկագրով 0.35069հա գյուղատնտեսական նշանակության 2-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

6. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Ակունք բնակավայրի 05-008-0005-0050 ծածկագրով 1.3506հա գյուղատնտեսական նշանակության 2-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

7.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Ակունք բնակավայրի 05-008-0212-0006 ծածկագրով 0.48343հա գյուղատնտեսական նշանակության 2-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

8. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վանևան բնակավայրի 05-083-0104-0089 ծածկագրով 1.06057հա գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

9.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Դարանակ բնակավայրի 05-029-0120-

0002 ծածկագրով 0.51642հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

10. Հաստատել վարձակալության տրամադրվող՝ 2-րդ կարգի վարելահողի տարեկան մեկնարկային գինը 1հա-ի համար 7400 (յոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, 3-րդ կարգի վարելահողի տարեկան մեկնարկային գինը 1հա-ի համար 6050 (վեց հազար հիսուն) ՀՀ դրամ, 4-րդ կարգի վարելահողի տարեկան մեկնարկային գինը 1հա-ի համար 3900 (երեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի տարեկան մեկնարկային գինը 1հա-ի համար՝ 4300 (չորս հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:

11.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ Վարդենիս համայնքում շարունակվում են իրականացնել հողերի չափագրման աշխատանքներ, որի արդյունքում էլ ի հայտ են եկել վարելահողեր, որոնք պարբերաբար մշակվել են բնակչության կողմից, սակայն վարձակալությամբ տրված չեն եղել:

Առաջարկեց տալ համաձայնություն՝ Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Շատվան, Կուտական, Գեղամաբակ, Ակունք, Վանևան, Դարանակ բնակավայրերում գտնվող գյուղատնտեսական նշանակության 2-րդ, 3-րդ, 4-րդ կարգի վարելահողերը և այլ հողատեսքը տրամադրելու վարձակալության մրցույթային կարգով՝ 25 տարի ժամկետով, և հաստատել վարձակալության տրամադրվող՝ 2-րդ կարգի վարելահողի տարեկան մեկնարկային գինը 1 հա-ի համար յոթ հազար չորս հարյուր ՀՀ դրամ, 3-րդ կարգի վարելահողի տարեկան մեկնարկային գինը 1 հա-ի համար վեց հազար հիսուն ՀՀ դրամ, 4-րդ կարգի վարելահողի տարեկան մեկնարկային գինը 1հա-ի համար երեք հազար ինը հարյուր ՀՀ դրամ, գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի տարեկան մեկնարկային գինը 1հա-ի համար՝ չորս հազար երեք հարյուր ՀՀ դրամ:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 18 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 42-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿՈՒՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-058-0021-0004 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.1 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ <<ԱՅԼ ՀՈՂԵՐ>> ՀՈՂԱՄԱՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ,

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ <<ԿԱՊԻ ՀՈՂԵՐ>> ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետո
ության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ
կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 2
9-ի N 1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ
վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ
ստեղծված <<ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի
մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի>> 2025
թվականի փետրվարի 10-ի թիվ 2/փ-56
եզրակացությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական սահմաններում
ընգրկված համայնքային սեփականություն հանդիսացող Կուտական բնակավայրի 05-
058-0021-0004 (սեփականության իրավունքի վկայական՝ N10042024-05-0073)
բնակավայրերի նպատակային նշանակության 0,1հա <<այլ
հողեր>> հողամասի նպատակային և
գործառնական նշանակությունը փոփոխել էներգետիկայի, կապի, տրանսպորտի,
կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտի նպատակային նշանակության <<կապի
հողեր>> գործառնական նշանակության՝ բջջային կապի կայան տեղադրելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը՝ առաջարկելով ՀՀ Գեղարքունիքի մարզի
Վարդենիս համայնքի վարչական սահմաններում ընգրկված համայնքային
սեփականություն հանդիսացող Կուտական բնակավայրի 05-058-0021-0004
ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,1 հա <<այլ հողեր>>
հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
փոփոխել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների
օբյեկտի նպատակային նշանակության <<կապի հողեր>> գործառնական
նշանակության՝ բջջային կապի կայան տեղադրելու համար: Առկա է
միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը և համապատասխան
փաստաթղթերը:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 18 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների
հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 41-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղվարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝ Վարդենիս համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել՝

1) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Համայնքի ղեկավարը առաջարկեց հաստատել, առաջին կետով, համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

Երկրորդ կետով՝ համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի, որը ներկայացված է Ձեր ուսումնասիրությանը:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 18 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 40-Լ)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով <<Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ>> ՍՊԸ-ից ստացված 03.02.2025 թվականի թիվ 04/0203 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Լիազորել (վերալիազորման իրավունքով) Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Աղաբեկի Խաչատրյանին (Նույնականացման քարտ՝ 013153077 տրված 24.11.2022թ. 043-ի կողմից) Վարդենիս համայնքի անունից, որպես ներկայացուցիչ, մասնակցել <<Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ>> ՍՊԸ-ի բնականոն աշխատանքներին, ինչպես նաև իրականացնել ցանկացած գործառույթ՝ կապված ընկերության բնականոն աշխատանքի հետ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար՝ նշելով, որ հիմք ընդունելով 05.04.2016 թվականի Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի քաղաքային համայնքների կողմից ստորագրված «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվության ընկերություն ստեղծելու մասին պայմանագիրը, ընկերության բնականոն աշխատանքները ապահովելու նպատակով, առաջարկում եմ հաստատել Վարդենիս համայնքի կողմից իմ թեկնածությունը, որպես լիազորված ներկայացուցիչ՝ ենթալիազորագրելու իրավունքով՝ մասնակցելու <<Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ>> ՍՊԸ-ի բնականոն աշխատանքներին, ինչպես նաև իրականացնելու ցանկացած գործառույթ՝ կապված ընկերության բնականոն աշխատանքի հետ:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 18 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 39-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 48-րդ հոդվածի, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում սոցիալական ծառայություններ տրամադրելու վերաբերյալ տեղական (համայնքային) ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝նշելով, որ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համայնքի բնակչությանը հանդիպող յուրահատուկ սոցիալական մարտահրավերներին արձագանքելու, միաժամանակ խթանելով բնակիչների մասնակցությունը և ներգրավվածությունն այդ հարցերի նույնականացման և դրանց արձագանքման գործընթացում, ինչպես նաև համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպումը դիտարկելով որպես համայնքային մակարդակում սոցիալական ծառայությունների պլանավորման գործիք, որը միտված է լրացնելու պետական և հասարակական սեկտորներում սոցիալական ոլորտի ծառայությունների իրավասություններից դուրս մնացած հարցերի լուծմանը, որոնք սոցիալական խնդիրներ են առաջացնում բնակչության համար: Նմանատիպ խնդիրների արդյունավետ լուծման համար կազմվել է տեղական սոցիալական ծրագիր, որը հիմնվում է սոցիալական վիճակի գնահատման, սոցիալական խնդիրների լուծման հարցում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության գործողությունների համատեղման ու ներդաշնակեցման սկզբունքի վրա:

Ձեզ ներկայացված փաստաթղթում ամփոփված են համայնքային քննարկումների ընթացքում նույնականացված առավել նշանակալի խնդիրներն ու դրանց արձագանքման ծրագրերը:

Առաջարկեց հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում սոցիալական ծառայություններ տրամադրելու վերաբերյալ տեղական (համայնքային) ծրագիրը, որը ներկայացված է Ձեզ ներկայացված նախագծին կից հավելվածում:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 18 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 38-Լ)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ «ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, <<Տեղական

ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Վարդենիս համայնքի ավագանու 2025թ. հունվարի 24-ի <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 6-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման հավելվածի

ա)«ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 2 ՄԵԴ» ՀՈԱԿ բաժնում ավելացնել <<դռնապահ>>-ի հաստիք՝ համաձայն հավելվածի:

բ) <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի մանկապարտեզ>> ՀՈԱԿ բաժնում՝ <<դռնապահ>>-ի և <<հոգեբան>>-ի հաստիքներ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ առաջարկելով կատարել փոփոխություն և լրացում՝ Վարդենիս համայնքի ավագանու 2025թ. հունվարի 24-ի նշված որոշման մեջ :

ՀՈԱԿ-ների աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է փոփոխություն և լրացում կատարել «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 2 ՄԵԴ» և <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ների աշխատակազմի հաստիքացուցակներում:

ա. կետով «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 2 ՄԵԴ» ՀՈԱԿ-ի աշխատակազմի հաստիքացուցակում առաջարկում եմ 19-րդ <<Ցերեկային պահակ>> տողից հետո ավելացնել 20-րդ տողում 1 հաստիքային միավոր <<դռնապահ>>-ի հաստիք՝ դրույքաչափը սահմանելով 109 հազար ՀՀ դրամ:

բ. կետով՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի մանկապարտեզ>> ՀՈԱԿ –ի աշխատակազմի հաստիքացուցակում ՝18-րդ <<Պահակ>>տողից հետո ավելացնել 19-րդ և 20-րդ տող, մեկական հաստիքային միավորներով՝ <<դռնապահ>>-ի և <<հոգեբան>>-ի հաստիքներ՝ դրույքաչափերը սահմանելով 109 հազարական ՀՀ դրամ:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 18 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 37-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 5-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Վարդենիս համայնքի ավագանու 24 հունվարի 2025 թվականի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 5-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և լրացում՝ որոշման հավելվածի 54-րդ տողից հետո ավելացնել նոր տող «55- սանտեխնիկ>>՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ համայնքապետարանում տնտեսական մասով առաջացած խնդիրների լուծման, խողովակաշարերի տեղադրման, սպասարկման, տեղադրման սխալների ուղղման և պարբերական ստուգումներ իրականացնելու և այլ աշխատանքներ իրականացնելու նպատակով, առաջարկում եմ Վարդենիս համայնքի ավագանու 24 հունվարի 2025 թվականի նշված որոշման մեջ կատարել փոփոխություն և լրացում. համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ մասում 54-րդ տողից հետո ավելացնել նոր տող՝ 55-րդ տող 1 հաստիքային միավոր <<սանտեխնիկ>> անվամբ՝ դրույքաչափը սահմանելով 180 հազար ՀՀ դրամ:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 18 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 36-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1 և 31-րդ հոդվածների 1-ին մասի 1.4, 1.8-րդ կետերի դրույթներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը և առաջարկեց հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածների:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի դրույթների իրագործման հիմնական գործիքը, որը հնարավորություն է տալու առավել իրատեսական, առարկայական դարձնել համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը՝ առաջիկա երեք տարվա համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն է (ՄԺԾԾ): Այն հստակեցնում է եռամյա ժամանակահատվածում համայնքի ծախսային քաղաքականությունը տարեկան կտրվածքով՝ հնարավորություն ընձեռնելով համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները և ստեղծելու պատշաճ ծրագրային հիմքեր առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար: Հիմք ընդունելով Վարդենիս համայնքի զարգացման 2022-2026 թվականների հնգամյա ծրագրով նախատեսված գերակայություններն ու առկա ռեսուրսները, Վարդենիս համայնքի առաջնահերթությունները, 2024 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի հիմնական ուղղություններն ու դրանց կատարման արդյունավետությունը, Վարդենիս համայնքի 2023-25 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի զարգացման հիմնական ուղղություններում առաջնահերթ և գերակա են համարվելու հնգամյա ծրագրի տրամաբանությամբ ու սկզբնական ժամանակաշրջանի համար իրագործելի այն նոր և շարունակական ծրագրերը, որոնք միտված են լինելու համայնքի տարածքային համաչափ

ա. կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ

բ. մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը: Համայնքի 2026-28 թվականների ծրագրերի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

Կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքապետարանի գործունեության թափանցիկությունը, բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:

1. Հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:

2. Հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը բնակչությանը մասնակից դարձնելը,

3. Մտահանության կազմակերպման և կարգավորման բարելավումը, համայնքի տարածքում առկա աղբավայրի գործելու դադարեցումը,

4. Համայնքի բնակիչներին հասարակական տրանսպորտով տեղաշարժի ապահովումը,

5. բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ստեղծումը,

6. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը,

7. Համայնքային ենթակայության առողջապահական հիմնարկների սպասարկման որակի բարելավմանը ուղղված աջակցությունները,

8. Նախադպրոցական հաստատությունների մատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովումը,

9. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների գարգացումը, մշակութային ծառայություններից օգտվելու մակարդակի բարձրացումը,

10. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը,

11. Շենքերի և բակային տարածքների բարեկարգումն ու բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովումը,

12. Բնակելի ֆոնդի վերանորոգումն և պահպանումը,

13. Հանգստի գոտիների ստեղծումը, կանաչապատման աշխատանքների իրականացումը, նոր կանաչապատ տարածքների ստեղծումը,

14. Նոր կառուցապատվող թաղամասերում ենթակառուցվածքների ստեղծումը,

15. Համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը,

16. Համայնքային ենթակառուցվածքների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության, բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմագավակ անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի իրականացումը:

Հարց ուղղեց ավագանու անդամ Նաիրա Մանուչարյանը՝մինչև 2026 թվականը համայնքիում տրանսպորտի շահագործման մասով, որին ի պատասխան համայնքի ղեկավարը հայտնեց, որ կար մտադրություն տրանսպորտային միջոցների քանակը ավելացնելու և համայնքում շահագործելու համար, սակայն 2026 թվականին այդ հարցի լուծումը կտվի կառավարության կողմից:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Հարցը ներկայացնելու ընթացքում դահլիճից դուրս եկավ ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը և քվեարկությանը չմասնակցեց:

Քվեարկության արդյունքում 17 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 35-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

Հաստատել՝ 2025 թվականի մարտի 25-ին ժամը 14:00-ին կայանալիք Վարդենիս համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը՝ բաղկացած 20 հարցից.

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
2.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 5-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
3.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ «ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
5.ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
6.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱՋԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
7.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿՈՒՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-058-0021-0004 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.1 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ <<ԱՅԼ ՀՈՂԵՐ>> ՀՈՂԱՄԱՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ <<ԿԱՊԻ ՀՈՂԵՐ>> ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
8.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
9.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՈՐՖԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-089-0018-0019 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.20005 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ <<ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ>> ՀՈՂԱՄԱՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ <<ԿԱՊԻ ՀՈՂԵՐ>> ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
10.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆԴԵՋԻՏԱԲԱՋԱԼՏԱՅԻՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:
11.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
12.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ <<ՄԵԾ ՄԱՍՐԻԿ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:
13.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՐԵՏՈՒՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-090-0011-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
14.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈԹՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՉՈՐՍ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
15.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՐԴԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ MAZDA CX-9 3.7 ՄԱԿՆԻՇԻ 07VM011 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
16.<<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՂԱՑԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԷԴՈՒԱՐԴ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ MERCEDES-BENZ E 240 ՄԱԿՆԻՇԻ 79RV009 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17 ՄԱՐՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 52-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
17.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
18.ՔԱՄԱՆՉԱՀԱՐ ՍԱՄՎԵԼ ԱՐՏԱԿԻ ՁԱՔՈՅԱՆԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
19.<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԵԴ>> ՀՈԱԿ ԵՎ <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ՄԵԴ>> ՀՈԱԿ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
20.ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑ 5-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 13 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՔԸ ՏԱՐԵՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՆԱՄՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 136-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՉԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2025 թվականի մարտի 25-ին ժամը 14:00-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու հերթական նիստը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 18-ը, բացակայում էին ավագանու անդամներ Արամ Մելքոնյանը, Արտակ Մանուկյանը, հարգելի բացակայում էին ավագանու անդամներ Մելանյա Եփրեմյանը, Սևակ Սիմոնյանը, Զավեն Շհոյանը, Արաքսյա Հայրապետյանը, Արուսյակ Ավետիսյանը, Սպարտակ հովհանիսյանը և Սաթենիկ Մինասյանը: Նիստը իրավազոր է: Նիստը վարում է համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը: Համայնքի ղեկավարը ընթերցեց օրակարգի հարցերը՝ նշելով, որ ավագանու անդամներին ներկայացված նախագծերում զետեղված օրակարգի 13-րդ հարցի կարտոֆիլացան գյուղատնտեսական գործիքի համար նախատեսված սարքավորումի ձեռքբերումը տևական ժամանակի հարց է, ուստի առաջարկեց օրակարգում կատարել փոփոխություն և լրացում, օրակարգից հանելով 13-րդ հարցը, որի փոխարեն առաջարկեց ընդգրկել՝

<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՐԵՏՈՒՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-090-0011-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> մասին հարցը, քանի որ նշված հարցին վերաբերվող ՀՀ Կառավարության որոշումը, ստացել ենք երեկ, իսկ հարցն անհրաժեշտ է հնարավորինս շուտ ներկայացնել քննարկման:

Նշեց նաև, որ անհրաժեշտ է օրակարգում ավելացնել 20-րդ՝

<<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑ 5-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 13

ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՔԸ ՏԱՐԵՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՆԱՄՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> հարցը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մեծ Մասրիկ բնակավայրի մանկապարտեզի շենքի մի մասն արդեն տրամադրել էինք անհատույց օգտագործման, և ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ տվյալ հողամասի և շինության չափերը չի բավարարել գործունեությունը ծավալելու համար, անհրաժեշտություն է առաջացել տվյալ շինությունը և հողամասը տրամադրել անհատույց օգտագործման՝ 10 տարի ժամկետով՝ Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիային:

Առաջարկեց հաստատել օրակարգը՝ բաղկացած 20 հարցից:

Հայտարարեց քվեարկություն, հարցը համարվեց ընդունված՝ ըստ հերթականության, այնուհետև օրակարգը հաստատելու մասին հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքում 18 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 34-Ա)*

Ավագանու անդամներ

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱՋՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԽՉԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՇԱԲՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՋԵՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Կամո Զարոյանը _____